Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
12.10.2013թ. դրությամբ

1. Ստացվել են նամակներ ընդամենը՝ **3805**
որից՝

	ԹՎԱՔԱՆԱԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	637	16.7
դիմում	2728	71.6
բողոք	440	11.5
կրկնակի	440	11.5
կոլեկտիվ	32	0.8

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝**865**

	ԹՎԱՔԱՆԱԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	737	19.3
բողոք	128	3.3

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԱԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	107	2.8
կոմունալ-կենցաղային	68	1.7
շինարարական	1	0.02
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	4	0.1
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	35	0.9
առողջապահության	49	1.2
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	2484	65.2
օրենսդրական	120	3.2
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	671	17.6
ապարատային		
այլ հարցեր	255	6.7

սեփականաշնորհում	11	0.2

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2013Թ. ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 3805 նամակներից մոտ 16.7. %-ը եղել են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 11.5%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 71.6%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ 65.2%-ն առնչվում է ֆինանսական հարցերին, մոտ 17.6%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում, ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները ստորաբաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումների (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումների:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 2.8%-ը առնչվում է բնակարանային, 1.7%-ը կոմունալ-կենցաղային, 0.02%-ը շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 6.7%-ը դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվնում ենք, որ ստացված դիմումներից 3415-ին տրվել է գրավոր, իսկ 325-ին՝ բանավոր պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 65-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է:

Աշխատակազմի քարտուղարություն